ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Այ բանահյուսական ժառանգությանը նվիրված յուրաքանչյուր աշխատանք վեր է հանում ժողովրդի հոգեւոր գանձերը եւ ներկայացնում այն անսպառ ակունքը, որ շարունակաբար բխում ու թարմացնում է բանավոր խոսքի հզոր ներուժը: Այդ շղթայի հերթական օղակն է Արցախի բանարվեստը ներկայացնող ժողովածուն (Երեւան, Էդիթ պրինտ, 2015, 748 էջ), որն ամբողջացնում է Արցախի բանահյուսական ժառանգության արդի փուլը:

Այդ առումով ներկա հրատարակությունը կարեւոր է ոչ միայն Արցախի, այլեւ համահայկական բանահյուսական ժառանգության վերջին 30 տարվա ընթացքը, ժանրային պատկերը եւ դրսեւորման ձեւերը պատկերացնելու եւ գնահատելու համար: Գաղտնիք չէ, որ բանահյուսական մի շարք ժանրեր, զրկվելով կենցաղավարման ավանդական միջավայրից եւ պահանջարկ ներկայացնող լսարանից, ենթարկվելով ժամանակի կործանարար ազդեցությանը, կա՛մ խսպառ վերացել են, կա՛մ էլ գրեթե քայքայման ու ձեւափոխման ընթացքի մեջ են:

Ներկա ժողովածուի ժանրային պատկերը լավագույնս արտացոլում է բանահյուսության արդի վիճակը եւ նրա առաջ ծառացած խնդիրները: Ի պատիվ ժողովածուի հեղինակի՝ պետք է ասել, որ նա իր առջեւ դրված խնդիրն իրագործել է գերազանց: Հեղինակ Արմեն Սարգսյանը 22 տարի անընդմեջ հարյուրավոր բանասացներից գրառել է մինչ այսօր պահպանված եւ պատմական հոլովույթով փոխանցված բանահյուսական բազմաքանակ նյութեր, որոնց լավագույն, ամբողջական եւ կատարյալ նմուշները կենտրոնացրել է սույն արժեքավոր հրատարակության մեջ, որը սկիզբ է դառնալու Արցախի մերօրյա բանահյուսությանը նվիրված գիտական հե-

տազոտությունների: Ժողովածուի ծավալը, ընդգրկված բնագրերի լեզուն, բանահյուսական նյութի տարածման շրջանակները, հանգամանալից ներածությունն իր բանագիտական եւ բարբառագիտական վերլուծություններով, արժեքավոր ու հարուստ բարբառային բառարանն ու ծանրակշիռ գիտական ապարատը խոսում են հեղինակի՝ անուրանալի ու անմնացորդ նվիրումով կատարած աշխատանքի մասին: Արցախը պատմական Հայաստանի այն երջանիկ երկրամասն է, որտեղ պահպանվել եւ շարունակում է կենցաղավարել Ղարաբաղի հարուստ ու հյութեղ բարբառը, որի ողջ հմայքն այս ժողովածուի միջոցով դառնում է ընթերցողի սեփականությունը:

Ժողովածուն նոր խոսք է մինչ այժմ (սկսած Բահաթրյան եղբայրներից մինչեւ մեր օրերը) Արցախի բանահյուսական ժառանգության հավաքման եւ հրատարակման գործընթացում: Այն ունի ընդարձակ ներածություն, որի «Պատմական համառոտ ակնարկ» ենթաբաժնում հեղինակը հպանցիկ ներկայացնում է Արցախի գրեթե 2000-ամյա պատմական վայրիվերումներով լեցուն ուղին եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 25-ամյա աննախադեպ տոկունությամբ կերտված հերոսական ընթացքը՝ ի նպաստ ընթերցողի պատկերացումների ամբողջականացման: Այնուհետեւ անդրադառնալով գրքի բուն խնդրին՝ հեղինակը հանգամանորեն դիտարկում է Արցախի բանահյուսության գրառման եւ հրատարակման պատմությունը՝ անուն առ անուն ներկայացնելով բոլոր այն նվիրյալներին, որոնց ջանքերով գրեթե մեկ հարյուրամյակ գրառված եւ հրատարակված բանահյուսական նյութերը դրվելով շրջանառության մեջ՝ հիմք են դարձել բանագիտական եւ լեզվաբանական մի շարք ուսումնասիրությունների: Ա. Սարգսյանը հանգամանորեն վերլուծել է իր նախորդների հավաքչական եւ հրատարակչական աշխատանքների վրիպումները, բացթողումները, բարբառային ու քերականական աղավաղումները: Ի մի բերելով թե՛ նրանց եւ թե՛ իր հրատարակությունների բոլոր թերությունները՝ հեղինակն իր համար որոշակի ուղենիշ է գծել, որպեսզի կարողանա պահպանել բարբառի անաղարտությունը: Ուստի բանահյուսական նմուշները ներկայացնելիս նա հաշվի է առել եւ պահպանել բարբառային գիտական տառադարձությունը՝ ըստ առանձին տեղավայրերի խոսվածքի արտասանական առանձնահատկությունների:

Նկատի ունենալով բանահյուսական նյութերի հարափոփոխ ընթացքը, ավանդական միջավայրի բացակայությունը, պահանջարկի ու կենցաղավարման ներկա պայմանները, բանասացական փոխանցումների

խզման, երբեմն նաեւ խսպառ վերացման հանգամանքը՝ հեղինակը ջանադրորեն ներկայացրել է Արցախի բանահյուսության արդի վիճակն իր դրսեւորումներով: Ժողովածուում ընդգրկված են 1992-2014 թթ. ընթացքում Արցախում Ա. Սարգսյանի հավաքած բազմաժանր բանահյուսական նյութերի լավագույն նմուշները: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է վիպական, քնարական եւ ասույթաբանական նյութերի քանակական ու որակական վիճակը, տարածվածության ու կենցաղավարման աստիճանը, տեղական առանձնահատկությունները, արդի ժամանակաշրջանին համահունչ եւ առավել բնորոշ բանահյուսական ժանրերի ավանդական հենքի վրա զարգանալու եւ իրենց կենսունակությունը պահպանելու կարողությունը: Որպես բանահյուսության արդի վիճակը, կենցաղավարումն ու շրջանառությունը ներկայացնող ամբողջական ու հիմնարար աշխատություն՝ ժողովածուն գերազանց պատկեր է ներկայացնում:

Ա. Սարգսյանը ժողովածուն կազմելիս հետեւել է ակադեմիական մինչ այժմ ընդունված ձեւաչափերին, մոտեցումներին, բանահյուսության տեսակների համակարգման մեթոդներին: Ներածության մեջ հեղինակն ընթերցողի ուշադրությունը հրավիրել է Արցախին եւ արցախցուն բնորոշ բանահյուսական ժանրերին, հանգամանորեն վերլուծել ավանդությունները, դրանց ազդեցության տակ առաջացած եւ մինչ օրս պահպանվող հավատալիքներն ու սովորությունները, ընդգծել բանավոր ստեղծագործությունների ոգեշնչող ու դաստիարակող նշանակությունը: Արցախում բանահյուսության արդի փուլն առանձնանում է զվարճախոսության ժանրի բուռն կենցաղավարման եւ ավանդական փոխանցումների վրա՝ զարգացող ժամանակակից զվարճախոսությունների աննախադեպ վերելքով: Արցախյան հանրահայտ Պըլը-Պուղու զվարճախոսությունների օրգանական շարունակություն կազմող մերօրյա զվարճախոսների (Բուդի, Սապոժնիկ, Վաղո, Ղըլեչի Միշա, Ավաքյ Ամի, Թունի դայի, Վարսենիգյ Հասի եւ ուրիշներ) անունների շուրջ ստեղծված եւ պատմվող բազմաքանակ զվարճախոսություններն իրենց բարոյախրատական ու դաստիարակչական բնույթով, ընդգրկած թեմաների բազմազանությամբ, սրամտությամբ ու կատակախոսության անսպառ դրսեւորումներով ներկայացնում են ժամանակակից արցախցու կյանքը, առօրյան, հուզող խնդիրները:

Արցախի բանահյուսական հարուստ ավանդույթը շարունակում են պահպանել նաեւ ասույթաբանական բանահյուսության իմաստալից եւ խորախորհուրդ նմուշները, որոնք արցախցու առօրյա խոսքի մասն են կազմում եւ լավագույնս արտահայտում են տարածաշրջանի ազգաբնակ-

չության մտածելակերպը, դրական ու բացասական ցանկությունները, դարավոր փորձով ամրագրված եզրահանգումները, չգրված օրենքները, հավատալիքներն ու սովորույթները, միով բանիվ, արցախցու դիմագիծը նախապատմական ժամանակներից մինչեւ մեր օրերը:

Ներածության զգալի մասը կազմում է հեղինակի ուսումնասիրությունը՝ նվիրված Ղարաբաղի բարբառին, որի առանձնահատկությունները հանգամանորեն ներկայացված են: Արդյունքում երկը ոչ միայն բարբառագետների, այլեւ սովորական ընթերցողի համար կարեւոր եւ ուսանելի ուսումնասիրություն է:

Ժողովածուում բանահյուսական սկզբնաղբյուրների դասավորությունն ու հերթագայումը հեղինակն իրականացրել է ըստ ակադեմիական ընդունված չափանիշների. այն է՝ վիպական, քնարական եւ ասույթաբանական բանահյուսության ժանրերը՝ ըստ Արցախի տարածաշրջանների: Աշխատությանը կցված են համապատասխան ծանոթագրություններ, որոնք արտացոլում են տվյալ նյութի բանասացի տվյալները՝ գրառման տեղն ու թիվը, առանձին ներկայացվել է, թե որ նյութը Ղարաբաղի բարբառի որ խոսվածքն է ներկայացնում:

Աշխատությունն ունի ընդարձակ բարբառային բառարան, որը դյուրացնում է սկզբնաղբյուրները հասկանալու գործը: Հանգամանորեն տրված են աշխատության մեջ տեղ գտած տեղանունների ու անձնանունների ցանկերը: Ի լրումն բոլորի՝ Ա. Սարգսյանը ներկայացրել է Արցախի բանահյուսության մատենագիտական եւ տարբեր արխիվներում պահվող ղարաբաղյան սկզբնաղբյուրների ցանկերը:

«Արցախի բանահյուսությունը» ստվարածավալ աշխատության հեղինակ Ա. Սարգսյանը, լավագույնս տիրապետելով Արցախի բանահյուսական ժառանգությանը, առաջնորդվելով իր կատարածի կարեւորությունն ըմբռնող բծախնդիր գիտնականի անմնացորդ նվիրումով, մեծ ներդրում է կատարել հայ բանագիտության պատմության մեջ: Սույն հրատարակությունը նոր խոսք է Արցախի բանահյուսական ժառանգության հավաքման, հրատարակման գործընթացում եւ սկզբնաղբյուրային կարեւոր արժեք է հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու, ՀԱԻ